

Ա Ի Ե Տ Ա Բ Ե Ր

Շ Ա Բ Ա Ք Ա Ք Ե Ր Թ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Կը հրատարակուի ամէն երեքշաբթի: Տարեկան գինն է 1 1/2, վեց ամսուանը 3/4, մէկտիպէ, կանխիկ: և հատը 30 փարս: Խմբագրութեան և բաժանորդագրութեան վերաբերեալ նամակներ ուղղուելու են առ Մր. Կրիստ. Կ. պոլիս, Ամերիկացի խան:

Հ Ա Տ Ո Ր 35.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ. ՆՈՅՆԵՐԵՐ 28. 1882

Թի 48.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ուստի՞ է կեանքը: — Պիտանի խօսքեր: — Աւետարան և քաղաքակրթութիւն: — Ամերիկայի Պորտ ընկերութիւնը և Բիւթանական Միութիւն: — Հնու-Քին ժողովրդային ազգին: — Կեղծաւորութիւն: — Նորաշիւք գրեան: — Քրիստոնեայն յալէկոծեալ ծովու կենաց: — Ռոտտոյի եկեղեցին: — ՉԱՍՏՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ: — Քաղաքական լուրեր: — Ստակի գիները:

ՈՒՍՏԻ՞ Է ԿԵԱՆՔԸ

Սըր Լայոնէլ Պիլ Անդրիային, աշխարհի հոգեւորական ընտանիք, մայիսի 15ին ճառ մը խօսեցաւ Լոնտոն, ի ժողովի «Լիքթորիա Ֆիլոսոֆիքէլ Ինստիտուտին» անուն ընկերութեան, որոյ հաստատութեան նպատակն է հետազոտել ամէն գիտնական լինելը: Սըր Լայոնէլ իւր ճառին մէջ խօսեցաւ ընդ երկար թէ ինչպէս հակասական է անոնց կարծիքը որ կը պնդեն թէ կեանքն յառաջ եկած կրնայ ըլլալ անկենդան նիւթէ: Յուշուց թէ չկայ ամենեւին ապացոյց այսպէս ըսելու, մանաւանդ թէ ամէն բան ի բնութեան կը վկայէ այս ենթադրութեան դէմ: Ըսաւ թէ մեկնութիւնը զոր նիւթեան (մարմնի) վիճակը կուտան բնութեան՝ քան զամենայն ենթադրութիւն «անզոր և անբաւական» է:

ՊԻՍՏԱՆԻ ԽՕՍՔԵՐ

Մարդ մը կրնայ ունենալ մեծ հանճար, և ըլլալ բարոյիւք դեւ: Մարդ մը կրնայ ունենալ բնական և իմացական իրաց վրայ կատարեալ գիտութիւն, և ըլլալ վատ, անզգամ, և իւր վարուցը համար՝ խոտան: Բարոյական առաւելութիւնն է ճշմարտ և բարձրագոյն մեծութիւն:

Ամէն մեքենայ կը շինուի նիւթէ, բայց նիւթոյ գործ չէ: Մարդ կը խորհի անոր հնարը, կ'ընտրէ և կը գործածածէ նիւթը, և այսպէս կը յօրինուի մեքենան: Այսպէս արեւելեացի մեքենան նիւթեղէն է, բայց ոչ նիւթոյ գործուած: Միտք գտաւ անոր հնարը, դրաւ օրէնքը, գործածեց անոր զօրութիւններն ի սկզբանէ, և դեռ կը գործածէ զանոնք վախճաններու համար որոյ կը ծառայեն այն զօրութիւնք: Միտքն է միայն ազատ գործող և հնարիչ:

Տկար միտքը չնչին բաներով կը լեցուի, մեծ բաներ չկրնար ընդունիլ: Ուստի նշառակ է նախապաշարուելու, և յաճախ կ'իյնայ սխալմանց և մտրութեան մէջ: Դիւրաւ կը գրգռուի նախատինք կամ թշնամանք համարելով ինչ որ իրօք նախատինք կամ թշնամանք չէ, և առանց պատճառի կ'ա-

տէ զայս: Ոչինչ այնպէս կը խռովէ դոյզն և տկար միտքը, ինչպէս ազարտուած տեսնել իւր պատիւը:

Իրաց գեղեցկութիւնը կը ճանչնանք աչօք և ոչ ախանջօք, ինչպէս որ երաժշտական նուագ մը կը զգանք լսելով, ոչ թէ տեսնելով կամ հոտոտելով: Պատմութիւն չտրվուի ուսողութեամբ (մարմնով), և ոչ երկրաբանութիւն՝ դիտակաւ աստղերը զննելով: Այսպէս մարդու հոգւոյն վրայ գիտութիւն ստանալ հնար չէ քիմիայէ, և ոչ հոգեւոր ճշմարտութիւն կը ստացուի որեւիցէ բնական գիտութեանէ: ՉԱՍՏՈՒՄՆԱԿԱՆ և անմահութիւնը չենք կրնար ճանչնալ բայց թէ հոգւոյ աչօք նայելով այն լուսոյ որ կը յայտնէ հոգւոյն մարդու հոգեւոր բնութեան և յաւիտեական վախճանին վերաբերեալ բաներ:

ԱՒԵՏԱՐԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Հարաւային Ափրիկէի միսիոնարներէն մին զրկած է հետեւեալ յօդուածն Ամերիկա հրատարակուած պարբերական թերթի մը:

«Քաղաքակրթութիւն Ափրիկեցին, և ապա քրիստոնէացուր: Ափրիկէի խռչարկուններէն ոմանք ըրած են այս գիտողութիւնը միսիոնարաց: Սըր Սամուէլ Պէյքէր կ'ըսէ. «Միսիոնարք և ուրիշ մարդասէր մարդիկ որ օգուտ ընել կը փափաքին Ափրիկեցոց, ի զուր կը սպառեն իրենց ազնիւ ջանքը վայրենի ցեղերու մէջ. ոչ այլազգ եթէ վաճառականութեամբ հնար է բերել զանոնք ի քաղաքակրթութիւն, և այս գործը կը կատարուի մեղմով և առ սակաւ սակաւ»: Պէյքէր կը խրատէ զմիսիոնարս ժամանակ մը եւս սպասել, մինչեւ Ափրիկեցիք սորվին մարդկութիւն:

Այս և ասոնց նման խրատներէ ինչ կը հետեւի: Անտարակոյս սա, թէ անոնք որ իրենց կեանքը կը նուրբեն ազնուացունել զԱփրիկէ՝ կը սխալին, քանզի ասոնց ջանքն է Ա-Երբանեւի, ըստ աստուածատուր պատուէրին թէ «Քաղաքացիք զԱւետարանն»: Թերեւս հարցունէ որ միսիոնարաց. «Կրնա՞ք այնպէս քարոզել Ափրիկէ ինչպէս կը քարոզէք Ամերիկա»: Առ այս կը պատասխանեմ, Այո, ըստ էութեան: Քամայ որդւոց մէջ, թէ ըլլան անոնք Չուլու կամ Բոնկուի և կամ Հոգէն-գող, չգտանք ցեղ մը որ կարող չէ ընտրել բարին չարէ, կամ թէ ըսենք՝ չունի խիղճ մտաց, և չզգածուի Քը-

րիստոսի սերէն: Եթէ այս վայրենի ցեղերն ունին միտք (և չեն կրնար չունենալ քանզի մարդ են), կրնայ այն միտքն ուղղուիլ առ Արարիչն իւր, առ պարտիս և առ վախճան իւր:

«Ինչպէս իմաստնագոյն փիլիսոփան՝ կ'ըսէ ոմն, «Իւր իմաստութեամբը, նոյնպէս և պարզամտագոյն ազան իւր պարզամտութեամբ կրնայ ընդունել զԱստուած: Քրիստոսի միջոցաւ իբրեւ բարոյական կենսատու զօրութիւն իւր բնութեան մէջ՝ կըրնանք ըսել զայս մարդոց յետնագունին համար, թէ հեթանոս ըլլայ, թէ Քրիստոնեայ: Աւետարանը, որ հոգւոյն մեծագոյն կարօտութիւնը լեցունելու համար է, կը բառնայ անոր խաւարը: «Ինչ խօսքիդ սկիզբը լոյս կու տայ», կ'ըսէ Գալիթ: Աստուծոյ Հոգին որ կը գործէ ճշմարտութեան և անոր քարոզութեան միջոցաւ, յառաջ կը բերէ փոփոխութիւն մը առանց որոյ ընդունայն է որեւիցէ մարդասիրական միջոց: Երբ այս փոփոխութիւնը կը բղի սրտէն իբրեւ ազրիւր յականէ, մինչեւ ցայն վայր ազտեղի, մերկ և ծոյլ հեթանոսը կը բաղձայ նախ լուսացուիլ, հազուի և գործել. յետոյ՝ ունենալ մարդը և վայելուչ տուն, դպրոց, աղօթատեղի, երկիրը մշակելու լուսագոյն կերպ, այլովքն հանդերձ: Այս ամէնը թելադրուին է Աւետարանին քաղաքակրթիչ զօրութիւնը:

Առաքելութեանց պատմութիւնը կը ցուցնէ զայս ըստ բաւականին: Հարցու Պատ. Մոֆֆադի թէ ինչ միջոցաւ Պէյքէրը սկսան ճանչնալ քաղաքակրթութեան կարեւորութիւնը: Սրդէն ըսած է շատ անգամ. «Աւետարանով»: Տեսնենք ինչ կ'ըսէ նաեւ Պատ. Արտին Կրուզ, Չուլուներուն Ամերիկացի առաքելալը. միթէ նախ քաղաքակրթեց այն բարբարոսները և ապա՞ն աւետարանեց: Չիք տարակոյս թէ ասոր հակառակը պիտի հաստատէ: Այս յօդուածը գրուին ևս անձամբ և ի փորձոյ գիտէ: Իւր բաղմամեայ քարոզութեան միջոցին յԱփրիկէ, այն վայրենամիտ բարբարոսը որ իբրեւ գաղան կը յաճէին գիշերներն անոր բնակարանին բողբոջը, շապիկ մը հագնել կամ մաճի վրայ ձեռք դնել անգամ չառին յանձն մինչեւ Գոգէն և Քրիստոնէ: Ինչ որ կ'ըսենք Ափրիկեցոց համար՝ կրնանք ըսել նաեւ ուրիշ վայրենի հեթանոսաց համար: Սամոն կ'ըզիններուն բնակչաց վերանորոգութիւնն և արագ յառա-

ջաղիմութիւնն առեւտրոց մէջ ուրիշ բանի չկրնար ընծայուիլ բայց միայն Աւետարանին: Այն կ'ըզեաց միսիոնարներէն մին կը պատմէ թէ երեք տարի առաջ տեղւոյն ընկնեալ տարին 30,000է մինչեւ 100,000 լիւր ծախք կ'ընէին. ինչո՞ւ համար: Տէրունական օրը պատշաճ և վայելուչ կերպով երեւնալու համար Աստուծոյ տունը:

Անոնք որ սխալ կը համարին միսիոնարաց ձեռքով Աւետարանի քարոզութեան եղանակը, կրնան ցուցնել մեղքն զայն յարմարագոյն եղանակ մը յաջողութեամբ և հաւաստեալ կատարելու այս գործը: Բարեկամք քաղաքակրթութեան, պատրաստեցէք նաև մը կարի, շաքարի, մշակութեան և ուրիշ արուեստներու նորահնար մեքենաներով, եկէք հարաւային Ափրիկէ. մտէք վայրենի ցեղերու մէջ որ ոչ Քրիստոնէութիւն գիտեն և ոչ քաղաքակրթութիւն. փորձեցէք տանել հինգ տարի կրթել զանոնք, և ապա խօսեցէք:»

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՊՈՐՏ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԲԻԹՄԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Պորտ ընկերութեան տարեկան ժողովն մէջ ի Բորդլիտ քիչ մը յազմուք եղաւ Բիթմանի Միութեան կողմէն պարտաւարի մը պատճառաւ որ գտնուածներ կային Պորտ ընկերութեան ընթացքին եւ ընկերութեան միսիոնարներէն ոմանց գործերուն դէմ: Այս գտնուածներուն համամիտ էր Սարգիս էֆ. Միսիոնեան որ ներկայ էր ժողովին, և ուրիշ մը կամ երկուք խօսեցան ժողովին մէջ:

Այս խնդրին յանձնուեցաւ այն մասնաժողովին, որոյ գործն է քննել Տնօրէն ժողովոյ տեղեկագրին այն մասը որ Արեւմտեան Թուրքիոյ առաքելութեան կը վերաբերի: Մասնաժողովին նախագահն էր Տոյ. Համիլին, և անգամներէն մին՝ Մր. Միսիոնեան: Մասնաժողովն իւր տեղեկագրին մէջ գովութեամբ կը յիշէ տարի մը առաջ «Մէմորանտում» անուամբ առ միսիոնարս Թուրքիոյ զրկուած գըրուած մը, եւ կ'ընէ հետեւեալ որոշումները:

1. Թէ տեղեկագրին հետ հրատարակուի «Մէմորանտումը» որ, ըստ մասնաժողովին, մեծ իմաստութեամբ գրուած է, և կ'աւանդէ գեղեցիկ կանոններ միսիոնարաց վարուելուն վրայ իրենց ժողովրդոց հետ, և կրնայ լուծել այս խնդրոյն շատ կէտերը:
2. Թէ կարելոք է ժողովարան շինելու ջանալ Բերտ և Լանկա: Վայելուչ աղօթատեղի ունենալ հարկաւոր է ամէն եկեղեցոց ամէն տեղ:
3. Թէ շատ բաներ կը տեսնուի որ բընիկ հովիւք եւ եկեղեցիք կ'ըլլան տակաւ տակաւ ծօղապատի եւ ժիւր Այս վարդապետա-

նէ կախեալ է Աւետարանի քարոզութեան գործին արագ ի գլուխ ելլելը : Մենք թերեւս չառ քիչ խօսած եւ խորհած ենք բնիկ եկեղեցեաց եւ անոնց հովիւներուն վրայ : Ընկերութեան բոլոր ջանքը , ազդեցութեան կարեկցութիւնը միշտ յայս ուղղեալ ըլլալու են : Անոնց յաջողութիւնը կամ անյաջողութիւնը մեր յաջողութիւնը կամ անյաջողութիւնն է :

Մասնաժողովն այնպէս կը համարի թէ Պորտի եկեղեցեաց եւ ընկերութեան օգուտը կը սահմանէ համագել բնիկ եկեղեցիները թէ յարգի եւ սիրելի են Պորտ ընկերութեան իրենց գործակիցը ի թագաւորութեան Աստուծոյ :

4. Թէ դատարարական իրաւունքն անկողնային մատենագրութիւնն այս ճակատով ժամանակին մէջ անգամ յառաջ կ'երթայ բնիկ Աւետարանական ժողովրդաց մէջ : Այս յառաջադիմութիւնը մեծ նշանակութիւն ունի , եթէ նկատենք անգլիական դժուարութիւնները որոց նշուակ է Աւետարանին գործն այն երկրին մէջ :

5. Թէ մասնաժողովը ուրախութեամբ կը տեսնէ միտնարաց բնիկ հովիւներու եւ ժողովրդեան հետ գործակցութեան օրինակները որ տեղեկագրին մէջ յիշուած են , եւ որոց սկզբունքը լաւ բացատրուած են Մէմորանտումին մէջ : Մասնաժողովը ուղիղ հիման վրայ դրուած կը համարի յիշեալ գործակցութիւնը :

Տեղեկագրին շատ տեղերէն կը տեսնուի թէ բաւական ծանր գծաւորութիւններ կան միտնարաց եւ Հայ Աւետարանական եկեղեցիներէն ամենց մէջ :

Այս գծաւորութեանց քանի մը կէտերը բաւական յայտնի են , չենք կարող սակայն այսպիսի հետեւէն հասկնալ ամէն բան , եւ արմատին հասնիլ :

Ուստի մասնաժողովը կ'առաջարկէ հաստատել որի մասնաժողով մը որ երկար եւ մանր քննէ այս խնդիրը , եթէ հարկ ըլլայ , զրկէ նաեւ պատգամաւորներ առ միտնարաց եւ եկեղեցիա թուրքիոյ հասու ըլլալ գծաւորութեան պատճառներուն եւ թեւադրել հարկաւոր դարմանները : Պատգամաւորք տեղեկութիւն տարու են մասնաժողովին , խորհրդակցելու են նաեւ Տնօրէն ժողովոյ հետ : Մասնաժողովը տեղեկագրի տարու է այս խնդրոյն վրայ Պորտի գալ տարուան տարեկան ժողովին :

Ըստ վերոյիշեալ յանձնարարութեան կազմուեցաւ յատուկ մասնաժողով մը որ կը բաղկանայ եօթը նշանաւոր անձերէ , որոց չորսն են աշխարհական մարդիկ , եւ չորսը հոգեւոր պաշտօնեաց :

Մ. Մինասեան երկիցս ատենաբանեց Պորտ ընկերութեան տարեկան ժողովին մէջ այս նիւթոյ վրայ , եւ կ'ուզէր երրորդ անգամ խօսել , բայց դժբախտաբար մօտ ի վախճան ժողովոյն , մինչ ատենապետը կարճ ճառով մը վերջ պիտի տար ժողովին :

Քրիստոնէական Միութիւնն անուն լրագիրը հասարակաց ընդհանուր զգացման վրայ կը խօսի այսպէս . « Պորտ ընկերութիւնը ցուցուց մեծ իմաստութիւն իւր անցեալ ընթացից վրայ այսպիսի խիստ պարսաւական ոգւոյ դէմ , եւ զէնքովն ըրաւ քննադատները ցուցնելով թէ պատրաստ է քննել դժուարութիւնը մինչեւ խորը : Քրիստոնէացի եկեղեցիք կը սպասեն համբերութեամբ խոստացեալ քննութեան արդեանց , վասն զի այս կերպով հնար է արագ եւ արմատաքի ուղղել ինչ սխալմունք որ եղած են անցելոյն մէջ : »

Դարձեալ . « Պորտի պաշտօնեացը , չնայ յեւթու ունկնդրաց յայտնի զայրացման , իմաստութեամբ չնորհեցին որչափ ժամանակ կը սահմանէր Մ. Մինասեան խնդիրը ժողովին առջեւ դնելու , եւ թոյլ տուին ամբաստանական գրուածը ցրուել շէնքին , բայց ոչ որահին մէջ : Կը կարծուի թէ Պորտը որչափ հնար է փութով պիտի

հրատարակէ տեղեկագիր մը իւր ընթացքին , ինչպէս նաեւ այն ընթացքը բռնած ըլլալուն պատճառաց վրայ ի Բիւթանիա : Խնդիր անձինք սպասելու են այսպիսի տեղեկագրի մը որպէս զի կարող ըլլան արդարութեամբ դատաստան ընել : »

ՀՆՈՒԹԻՒՆ ՄՍՐԴԿԱՅԻՆ ԱՁԳԻՆ

Թագաւորական ընկերութիւնն կոչուած Անգլիական ընկերութեան անգամ եւ երկրաբանութեան ուսուցիչ Մ. Տօքլինս անուն Անգլիացին հրատարակած է գիրք մը , ուր ընդարձակ եւ անաչառ կը խօսի սա խնդրոյն վրայ , թէ որչափ ժամանակ է յորմէ հետէ մարդկային ազգը երեւցաւ ի կղզիա Բրիտանիոյ :

Մ. Տօքլինս ջերմութեամբ չի պաշտպաներ որեւիցէ եթադրութիւն զհնութենէ մարդկային ազգին : Չի պնդեր որ շէլ ճշդիւ ժամանակն յորում երեւեցաւ նախ մարդ արարածն յերկրի . այլ , ընդհակառակն , կ'ըսէ թէ երկրաբանական դարուց թուականը առ այժմ չեն կրնար որոշուիլ : Մ. Տօքլինսի գրոց իւրաքանչիւր էջ կը ցուցնէ թէ որչափ զգուշաւոր է հեղինակն եւ չէ մէտ ընդունել որեւիցէ կարծիք զհնութենէ մարդկային ազգին առանց քննելու անաչառ ամէն կարծիք , ուստի եւ անոր խորհրդածութիւնները չեն կրնար հաճեցունել այն երկրաբանները որ առանց կատարեալ ապացուցի անհուն հնութիւն կու տան մարդկային ազգին : Մ. Տօքլինս , յետ խնամով քննելոյ այս խնդրոյ վերաբերեալ ամէն ապացոյց , կու գայ սա հետեւութեանց :

Որչափ եւ երկար համարուի ժամանակն յորում սկսաւ երեւիլ մարդ երկրի վրայ , այս ժամանակն երկրաբանութեան մէջ յետնադոյն կամ նորագոյն է , քանզի , մարդուս երեւելն ետքը երկրի վրայ , կազմուած է երկրի երեսին վերագոյն խաւը : Այս վերին խաւին մէջ միայն կը գտնուին ձեռագործ կազմածք , գործիւնակ , սակրեայ սոսիք , գոյալիտաղեայ սըլաքներ , այլովքն հանդերձ : Մ. Տօքլինս կը ցուցնէ թէ , թէեւ մարդուս տակաւ զարգացման զրութիւնն ընդունինք , ամենեւին հաւանական չէ թէ մարդ երեւցած էր երկրի վրայ աւելի կանուխ քան որչափ կը ցուցնեն յիշեալ մնացորդք : Մարդ կաթնատու շնչաւորաց մէջ քան զայլ աւելի զարգացեալն է , ուստի եւ բնութեան ընթացքին հակառակ է որ մարդ , կաթնատուաց կատարեալը , երեւնար , մինչ քան զնա ստորնադոյնք եւ պարզագոյնք դեռ անկատար վիճակի մէջ էին . եւ արդարեւ առաջին հետք գոյութեան մարդոյ գտնուած են յետնագոյն երկրաբանական խաւին մէջ միայն որ կը կոչուի Բիւթանիա :

Այն ժամանակ երբ կազմուեցաւ այս խաւը երկրաբանական հնագոյն դարերու անասունք ջնջուած էին , եւ արդի շնչաւորք երեւցած էին արդէն երկրի վրայ , բայց անտուեն արդի շնչաւորք կը զըտնուէին տարբեր երկրիներ , եւ ոչ այն երկրիներն յորս հիմա կը գտնուին : Անգլիոյ առաջին եւ բուն բնակիչք որ որսորդ էին՝ կ'որսային բորեան , առիւծ , գետաձի , փիղ , այլովքն հանդերձ : Ասկէ կը հասկցուի թէ Անգլիոյ այն ժամանակի կլիմայն շատ տարբեր էր այժմու կլիմայն : Այն երկրին կլիմայն կը փոխուէր ժամանակ ժամանակ : Երբեմն կը տիրէր հոն հիւսիսային գոտիներուն ցուրտը , եւ երբեմն՝ հասարակածի երկրներուն տաքը : Երկրը նշուակ էր նաեւ մեծամեծ փնտուց որ յառաջ կու գային անհուն սառնամանեաց յորդեղէն : Անգլիա եւ Իրլանտա միացեալ էին անտուեն , եւ երկրքն միանգամայն կից էին Եւրոպայի ցամաքին , եւ ծովեզերքն աւելի հեռուն կ'երթար Ազլանդեան ովկիանոսի մէջ քան հիմա :

Մ. Տօքլինս կ'ըսէ թէ Բրիտանիոյ այն նախնի որսորդ բնակիչք տարածուած էին նաեւ Եւրոպայի ցամաքին մեծ մասին վրայ , բայց չկայ ապացոյց թէ անոնք անասնոց ստորին տեսակէ մը կը սերէին :

Այն նախնի որսորդաց յաջորդեցին ուրիշ տարբեր ցեղի մարդիկ , յորոց մնացորդք կը գտնուին Անգլիոյ եւ Եւրոպայի ուրիշ երկրներու այրերուն եւ անձաւներուն մէջ : Այս նոր ցեղն ազնուագոյն էր քան զառաջինն , ասոնց գործիներն աւելի ճարտարագործ են , եւ կ'երեւի թէ ունէին նաեւ մինչեւ աստիճան մը արուեստ : Մ. Տօքլինս կը ջանայ ցուցնել թէ այս նոր ցեղն էր այժմու Եւրոպացոց նախնին , եւ կան արդարեւ գիտողութեան արժանի նմանութիւնք ի մէջ Եւրոպացոց եւ այն հին բնակչաց :

Յետ ժամանակաց ուրիշ մարդկային ցեղ մը , կարճահասակ եւ թխուկեր , եկաւ գաղթականութեամբ յարեւմուտս կոչ , բերելով ընդ իւր արջառ եւ ոչխար եւ տեսակ տեսակ արմաթք : Ասոնք են այժմու Եւրոպական ազգաց նախահարք , յառաջապահ զինուորք այն մեծ բանակին քաղաքակրթութեան որ տակաւ կը յառաջանայ : Այս նոր ցեղը բերաւ ընդ իւր շատ արուեստներ , որովք մարդ կը տարբերի ստորին անասուններէ , եւ որ տակաւ զարգացած եւ յառաջ բերած են արդի քաղաքակրթութեան պտուղները : Այս ցեղը տարածուած էր Եւրոպայի մեծ մասին վրայ , նաեւ Ասիոյ մէջ շատ տեղ եւ հիւսիսային Ամերիկէ : Ասոնք էին Եւրոպայի տեսարք մինչեւ որ Ասիայէն կեղտ կոչուած ցեղն եկաւ Եւրոպա :

ԿԵԴՊՍԻՈՐՈՒԹԻՒՆ

Դոնտանի մէջ երեւելի պտակերական մը նկարեց արեղայ մը իւր եկեղեցական զգեստներով : Ի հեռուստ նայողին արեղայն կ'երեւէր ազօթով զիրքի մէջ , ձեռուները իրարու փակուած եւ կրծոց առջեւը հորիզոնական զիրքով բռնած եւ աչուներն հեզութեամբ վերամբարձած , Աւետարանի մէջ յիշուած մաքաւորին նման , եւ կը թուէր թէ բարի մարդը բարոյովն ընկղմած էր բարեպաշտական խոհմանց մէջ : Սակայն մօտէն նայողին առջեւ գաղտնիքը կը պարզուէր : Գիրքը որ արեղային առջեւն կ'երեւէր , չէր գիրք այլ բընըմպանակ մը որուն մէջ արեղայն լինին կը քամէր : Կեղծաւորութեան ինչ կենդանի նկարագրի :

Յինք թոչուն է որ ի բարձունս կը խօսանայ , որպէս թէ տենչար երկինքը հասնելու , սակայն նա իւր սուր աչուները միշտ կ'ուզէր դէպ երկիր հոն որս մը նշմարելու համար : Այսպէս են կեղծաւորները որոնք կը սիրեն խօսիլ երկնային եւ հոգեւոր իրաց վրայ , կ'երթան եկեղեցի եւ կ'ուսնուն սուրբ ընթրիքէն , կը կարգան , կ'ազօթեն , կ'երգեն , բայց այսու ամենայնիւ անոնց սիրտը կազուած է երկրի հետ , եւ անոնք կը փնտենեն զայն որ ժամանակաւոր է առաւել քան զայն որ յաւիտենական է :

Արուեստը կը նմանի բնութեան , եւ իւր գործողութեանց մէջ որչափ աւելի մերձեանք բնութեան այնչափ աւելի գերազանց է : Ծնորհքը Քրիստոնէին նոր բնութիւն մ'է , եւ կեղծաւորութիւնն է այն արհեստը որ շնորհքին նմանցնել կը ջանայ , եւ նմանութեան մէջ որչափ աւելի պտուղաւ ըլլայ , այնչափ աւելի հաճելի է մարդոց , բայց ալ աւելի գարշելի Աստուծոյ : Կեղծաւորը կրնայ կազմել հոգեւոր մարդ մը պատկերով այնպէս կենդանի եւ եռանդուն որ ոչ միայն ուրիշները , այլ կեղծաւորն իսկ կրնայ գորմանալ անոր եւ հաւնիլ , կրնայ մինչեւ իսկ խորհել թէ կ'աճի ի սէր Քրիստոսի , բայց այսպիսին ոչ նուազ գարշելի է

յաջս սրտագիտին Աստուծոյ քան զինքնահաւանն :

Կրնայ ըլլալ որ կեղծաւորը խօսի հրեշտակի մը պէս , սակայն նա ունի ընչաքաղց աչք մը կամ իւր ձեռացը մէջ անխուստեան կաշառ մը , կամ անոր ձեռքը ձեւակ է , բայց սիրտը լի է նեխութեամբ եւ ապականութեամբ : Կրնայ նման ըլլալ նաբուգոգոնոսորայ արձանին , որ ունի սակիէ գլուխ , բազում գիտութիւն , բայց կ'աւէ ոտք , անոր փափաքները աշխարհային են , երկրաւոր բաները կը մտածէ , եւ իր ճամբան ու գնացքը մարմնաւոր եւ զգայական են :

Վերտարիս կը պատմէ Քաղէտոնեան քարին համար թէ այն քարը կը պահէ իւր ազնուութիւնն ու պոյծառութիւնը ցորչափ փակեալ կայ ոսկոյ մէջ : Այս քարն յարմար օրինակ է կեղծաւորին որ բարի է միայն ցորչափ փակեալ է ոսկեղէն յաջողութեան , ապահովութեան եւ երջանկութեան մէջ : Կեղծաւորներն Աստուծոյ հետ չեն քալեր , կը ձեւացնեն թէ Քրիստոսի ետեւէ կ'երթան , բայց շատ հեռու են Քրիստոսէ : Կը ծածկուին պարզութեան , սրբութեան եւ ուղղութեան քօղի տակ , սակայն անոնց սեւ սիրտը բայց է Աստուծոյ առջեւ :

Յերոսոմովն կինը մարգարէին զնաց իւր որդւոյն վրայ լուր հարցնելու : Կինը ծպտեցաւ չճանչցուելու համար , սակայն մարգարէն ճանչցաւ զայն այնպէս շուտ որ երբ նա դուռը կը զարնէր , մարգարէն կանչեց , « Ներս եկուր Յերոսոմովն կինը » : Այսպէս թէպէտ կեղծաւորը կը ծպտին սրարկելու երեւոյթներով , սուրբ խօսքերով եւ համեստ ընթացքով որպէս զի չճանչցուին , սակայն Աստուած կը տեսնէ կեղծաւոր մը , եւ անոր երեսնէն զիմակը վար պիտի առնէ , ինչպէս ըրաւ շատերուն որ կեղծել ջանացին :

Յորչափ կրօնն յարգանաց եւ յաջողութեան մէջ է , կեղծաւորութեան ախտը կը մտնէ նաեւ յեկեղեցին , շատ անգամներ կը բռնուին այն ախտէ , եւ ախտը ներքին ըլլալուն համար թէեւ շուտ չզգացուիր , սակայն շատ վտանգաւոր է , ուստի եկեղեցին շատ արթուն եւ զգոյշ ըլլալու է այս մասին : Ծառեր անկեղծ կ'երեւին Աստուծոյ արտաքին երկրպագութեանը մէջ , եւ կրնան աղէկ մարդիկ ճանչցուիլ բարուք եղանակաց եւ խաղաղութեան ժամանակաց մէջ , բայց ճակտողութեան օրերը մեծ փորձի օրեր են այսպիսեաց համար :

Կ. Ս. ԳԱՐԻՆԵԱՆ
Վան , 82 Սեպ. 5

ՆՈՐԱՏԻՊ ԳՐԵԱՆ

Ապացոյց ճշմարտութեան . Բացատրութիւն Քրիստոնէական վարդապետութեան հարցմամբ եւ պատասխանով : Հայերէն եւ Հայերէն գրով Թրքերէն : Գինը 4 1/2 դոլար հեկան :

Բնական աշխարհագրութիւն . Թարգմանութիւն բնական աշխարհագրութեան Ամերիկացի գիտնոյն վարդէնի : Յարմարեալ ի պէտս բարձրագոյն գաղտնաց եւ վարժարանաց : Առանձին յաւելուածով կարելու տեղեկութիւններ տրուած են Թուրքիոյ բնական աշխարհագրութեան վրայ : Ունի ինը գունաւոր աշխարհագրոյց տախտակներ եւ վաթսուս պատկեր , թող այլեւայլ յատակներու եւ ձեւերու ուրուագիծները : Պիտի հրատարակուի Հայերէն գրով Թրքերէն ղեկտեմբերի մէջ :

Հարցման է պէտս կրօնաբանաց դպրոցաց . 1885 տարւոյն համար , Հայերէն եւ Հայերէն գրով Թրքերէն : Գինը 1 1/2 դոլար հեկան :

Պարբերակ Եւրոպայի Եւրոպայի Ստուարթ թղթոյ (Տոպօպապ) վրայ գեղեցիկ գունաւոր զարդուք եւ նկարուք տպուած ամուսակներ են , 12 հատը մէկ ծրար :

Հայերէն, Հայերէն եւ Յունարէն գրով թրքերէն եւ Պուլղարերէն, տղայոց պարգէսէր համար: Իւրաքանչիւր ծրարի գինն է 5 դահեկան, եւ հասար 20 փարա:

ՂՈՒՆԵՏԻՐ-ԻՒՂՈՒՂԱԹ ԲԱՌՊԻՐՔ

Աւերաբարձութիւն ԵՒ ՄԻՒԱՅԵԼ ԷՖԵՏՏԻՆԵՐՈՒ Անդամոց Հասարակաց կրթութեան պաշտօնատան Գրաքննութեան սենեկի Հրատարակիչ ԳԱՐԵԳԻՆ ՊԱՐՏԱՍԼԵԱՆ

Այս բառարանին 15երորդ տետրը հրատարակուեցաւ, եւ կը վաճառի Արամեան գրատունը իւրաքանչիւրը 2 դահեկանի: Ամբողջ գործը պիտի բաղկանայ 54 տետրակէ, եւ բոլորին բաժանորդագրութեան գինն է կէս Օսմանեան լիրա:

ՄԱՏԵՆԱՍԻՍԱՐԱՆ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ

Ժողովրդեան համար այս օգտակար տետրակներուն Առաջին շրջանի 5 եւ 6 թիւերն ալ հրատարակուած են: Այս թիւերն ինչպէս եւ սակէ առաջ հրատարակուածները կը գտնուին Արամեան գրատունն եւ ուրիշ գրավաճառաց քով: Վեցամսեայ բաժանորդագրութեան գինն է 4. պոլսոց համար 5, իսկ գաւառաց համար 6 դահեկան:

ՔՐԻՍՏՈՆԵԱՅԻՆ ՅԱՆԿՈՅԵԱԼ ԾՈՎՈՒ ԿԵՆՍՅ

Ընդ ծով կենաց համատարած նաեւ յերկինս, առ Հայր Աստուած, Բայց, ո՛հ, այս ծով վտանգալից կ'ահաբեկէ իմ խեղճ հոգիս:

Մեղքերս, աշխարհ եւ սատանան Ձիւ կը կանչեն որ ետ դառնամ. Սակայն մեղացի պիղծ երկրի, Մահու զօգիր հոտ կը բուրի:

Թէ հոն դառնամ, մեռնիմ պիտի. Եթէ երբէք յոյս կայ ինձի, Անշուշտ պէտք է յառաջ երթամ, Թերեւս հասնիմ երկնից Բանան:

Յիսուս Փրկիչ, Էմանուէլ, Հաճէ իմ նաւ զեկազարեւ, Իմ եղիկի վիճակս տես, Ողորմուկ ձայնս չի՞ շարժեր քեզ:

Երկինք պատած սեւ ամպերով, Սաստիկ շնչէ կատաղի հով: Ծարժի տակէն այս խորունկ ծով, Կը կորուզիմ հոգւով, մարմնով:

Կտողած ալիք դռան, գոչին, Աւաղ, գոգցես նաւս կը կլնն, Թէ զեկավար չըլլաս նաւուս, Շուտ կ'ընկղմի, Տէր իմ Յիսուս:

Իջիր երկնաւոր թեւովք լուսոյ, Ըզ հով, ըզ ծով հանդարտեցո՛ւ, Մինչեւ հասնի նաւս ի յերկինս, Մի՛, կ'աղաչեմ, մի թողուր զիս:

Այս մութ ամպերն ցրուէ, Տէր իմ, Որ պարզ աչօք յերկինս նայիմ, Տեսնեմ լուսոյ քաղաքն յերկնի, Ուր նաւս ընդ հուզ պիտի հասնի:

Յ. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Խորհրդէ, Հայաստանեայց ուսումնարան

ՈՒՍՏՈՒՂՈՅԻ ԵԿԵՂԵՑԻՆ

Տեղւոյս Հայ Աւետարանական եկեղեցին հաստատուեցաւ 1852 սեպ. 17 ին, եւ քանզի հիմա երեսուն տարի ե-

ղած է յորմէ հետէ այս եկեղեցին կառմուեցաւ, մտադիր էի այս առթիւ առաջարկել եկեղեցւոյ հոգաբարձութեան սեպ. 17 ին յատուկ հանդիսի տօնել իւր հաստատութեան երեսներորդ տարեդարձը, եւ այս առթիւ եկեղեցւոյն անցեալ 50 տարուան ընդհանուր գործոց եւ վիճակի վրայ տեղեկութիւններ տրուելին: Բայց ըստ որում անձնական բազում զբաղանաց հետ ինչ ինչ արգելքներ անկարող ըրին զիս այն առաջարկութիւնը մատուցանել հոգաբարձութեան, եւ ըստ որում սեպ. 17 ի օրն արգէն անցած է, կը փութամ հետեւեալ տեղեկագրութիւնը յղել Աւետարանի ի հրատարակութիւնս:

Վէճակացոյ 1852-1882 արգելքն

Ա. Հոգաբարձութիւն. Եկեղեցին բոլոր այս 50 տարուան մէջ ունեցաւ 5 հովիւ, այսինքն 6 տարի Պատ. Մկրտիչ Քիրէճեան, 12 տարի Պատ. Արթուր Պուլղարեան եւ 12 տարի Պատ. Յ. Ա. Ստեփանեան:

Բ. Սարգսիս-Քրիստի. Եկեղեցւոյ սարկաւազութեան պաշտօն վարած են 1. Պատ. Մովսէս Տ. Մկրտիչեան. 2. Պար. Եփրեմ Ս. Սարգսեան, 5. Պար. Վ. Յովհաննէս Կարապետեան, 4. Պ. Միրիճեան Ուրթութեան, 5. Պ. Յակոբ Ախարեան եւ 6 Հաճի Տօնիկ Չափու շեան:

Գ. Եկեղեցւոյ անդամ. Եկեղեցին ի սկզբան հաստատուեցաւ 7 անդամներով, եւ այս թիւն 50 տարուան մէջ հասաւ 70 ի, որոցմէ 15 ը յանձնուեցաւ այլ եւ այլ եկեղեցեաց, 10ն ի Տէր ննջեցին եւ 11ը կարուած եւ մին առ կախ ձգուած է:

Դ. Մկրտութիւն. Երեսուն տարուան միջոցին եկեղեցին ունեցաւ 145 մկրտեալներ որք մկրտուեցան թէ՛ եկեղեցւոյս հովուաց եւ թէ՛ այցելութեան համար քաղաքս գտնուող միտնարաց եւ երկցանց ձեռք:

Ե. Դպրատան վիճակ. Ժողովուրդն անցեալ 50 տարուան մէջ երբեմն մի եւ երբեմն երկու դպրոց ունեցաւ, որոց մէջ պաշտօն վարեցին 11 վարժապետ եւ 9 վարժուհի:

Զ. Գրախոսութիւն. Ցաւալի է որ աս մասին ասոյք տեղեկութիւններ չկրցայ ստանալ, բայց հաւանական հաշուով համազուած եմ թէ՛ բոլոր անցեալ 50 տարւոյ մէջ առաւել քան 500 լիրա Սուրբ գիրք եւ այլ հոգեւոր եւ կրօնական գրեան վաճառուած են եկեղեցւոյս ձեռք թէ՛ քաղքիս մէջ եւ թէ՛ գաւառները, գրածախներու միջոցաւ:

Է. Ժողովրդական վիճակ. Ժողովուրդը բոլոր այս միջոցին ունեցաւ երկու աղքատ պետ, Հ. Դէրբէ ԼՔիշտի Գուզու Քիւպապետ եւ Կարապետ ԼՔիշտի Ճիւղիօզեան: Ի սկզբան ժողովրդական ամէն գործ կը տեսնուէր քանի մը անձերէ բաղկացեալ հոգաբարձուաց ժողովով մը, բայց 1875 ին ի վեր է որ ժողովրդական տեղական սահմանադրութեան մը համեմատ երեսփոխանական սկզբան համաձայն կը տեսնուին ժողովրդական գործեր:

Ը. Անհատական վիճակ. Անցեալ 50 տարուան մէջ ամուսնութեան 25 պոսկ կատարուած է Պատ. Մ. Քիրէճեան, Պատ. Ա. Պուլղարեան եւ Պատ. Յ. Ա. Ստեփանեան հովուաց եւ միտնար Պատ. Տոգ. Տուսյթի ձեռք:

Թ. Եկեղեցւոյ անհատական օգուտ. Կարող չեղոյ քննել եւ ստուգել թէ՛ անցեալ 50 տարուան մէջ տեղւոյս Աւետարանական ժողովուրդը բուն իւր քսակէն ո՛րչափ ստակ տուած է հովուի, դպրոցի, աղքատաց, առաքելութեան, ժողովարանի շէքերու, գերեզմանատան եւ այլեւայլ բարեխիտական եւ ազգային տրոցայլ ամենայն հաւանականութեամբ եւ ճշգրտութեան մօտադոյն հաշիւներով հաս-

կըցուած է թէ ժողովուրդը յիշեալ բաներուն տուած է առաւել քան հազար Օսմանեան լիրա:

Ժ. Բնկերութիւն. Եկեղեցւոյ եւ ժողովրդեան մէջ անցեալ 50 տարինեւրո մէջ հաստատուեցան 8 բնկերութիւնք, այլ եւ այլ անուններով եւ այլեւայլ նպատակներով:

Բաց Առաքելական եւ Տասանորդական բնկերութիւններէ, միւս բոլոր բնկերութիւնք նշանաւոր ծառայութիւններ մատուցին եկեղեցւոյ եւ ժողովրդեան:

ՄԻՋՐԱՆ Թոտոսդոյ, նոյ. 5. 1882

ՉԱՍՏՈՒԱԾ ՏԵՄԵՆԵԼ

«Ով որ մեղք կը գործէ, զանի տեսած չէ ու զանի ճանչցած չէ» (Ա. Յովհ. Գ. 6): Անհաւատք եւ հեթանոթ ոչ զիտեն զԱստուած, ոչ բաղձանք ունին զԱստուած տեսնելու եւ ոչ ալ վախ ունին մեղք գործելու: Ասանց երջանկութիւնը եւ հանգստութիւնը իրենց կամքն եւ հեշտութիւնը կատարելու մէջ է:

Քրիստոնեայք այնպէս չեն, անոնք իրենց ընթացքին մէջ կը ջանան Աստուծոյ կամքը կատարելու, եւ անոնց երջանկութիւնն այս բանին մէջ է:

Անհաւատութիւնը բարոյական սրբութեան աղբիւրը խաղաղ կը ցամբեցունէ մարդուն սրտէն, եւ սիրտը այնպիսի վիճակի մը կը հասցնէ որ ոչ միայն անհունապէս կը տարբերի Քրիստոնեայ մարդու սրտէն, այլ անհայտ թշնամի կ'ըլլայ այն զգացմանց եւ մտածութեանց զոր Քրիստոնէի սիրտն ունի: Որպէս թէ ներքին կերպով այդ երկու մարդիկ զատ զատ ստեղծուածներ են, արտաքին կերպով երկուքն ալ Ազգամին որդիքն են, իսկ ներքին կերպով իրարու հակառակ տարբեր ստեղծուածներ են: Ինչ որ կ'ընէ սրտին անհաւատութիւնը, նոյնը կ'ընէ նաեւ անապաշխարութիւնը, ինչ զօրութիւն որ ունի անհաւատութիւնն որով կը բռնէ մարդուն սիրտն, նոյն զօրութիւնն ունի նաեւ անապաշխարութիւնը: Անապաշխարութիւնը մեղքի զօրութիւնն է, եւ անհաւատութիւնն անտեսանելի սերմնն:

Ոչ Քրիստոնեայ մարդիկ իրենց բնական վիճակէն կը վազեն անհաւատութեան, իսկ Քրիստոնեայ անապաշխարք անապաշխարութեան կը վազեն դէպ յանհաւատութիւն: Անհաւատութիւնն անապաշխարութիւնն է եւ սպառնանքն անոնց որք Աստուծոյ պաշտօնը մտնելն ճանճարացած են եւ իրաւաւոր տեղ կը մտնեն: Ի բնէ անհաւատք այնչափ զգուանօք չեն նայիր Աստուծոյ գրքին, քան որչափ կը նային անօք որք բազում կերպիւ մաքաւեցան անոր հետ, ապա թէ՛ մերժեցին զանի: Երկուքն ալ զԱստուած չեն տեսներ, ոչ անհաւատք եւ ոչ ալ անապաշխարք: Անհաւատն ոչ Աստուծոյ էութեան կը հաւատայ, եւ ոչ ալ կը ցանկայ զանի տեսնել, անապաշխարն Աստուծոյ էութեան եւ անոր գրուոր յայտնութեան կը հաւատայ, բայց աւելի առաջ չերթար զԱստուած տեսնելու մէջ, Սուրբ գիրքը կ'ըսէ այնպիսեայն թէ՛ անապաշխար է, Աստուծոյ եկեղեցին ալ կ'ըսէ այնպէս, բայց անապաշխարն իր վրայ չառնուր այս անունը: Ով որ ըսէ անոր, Դուք անապաշխար ես, նա այս խօսքն իրբեւ թշնամանք եւ ատեղութիւն կը համարի: Արդ, եթէ լռեն Քրիստոնեայք, եւ չըսեն մեղաւորին թէ՛ ապաշխարելու է, ապա մի պիտի ըսէ: Անապաշխարը կ'ըսէ, ես իմ Սուրբ գիրքս կը կարգամ, անկէց կրնամ հասկնալ թէ՛ ես անապաշխար վիճակի մէջ եմ թէ՛ չէ: Աստուծոյ հին եկեղեցին թէ՛ եւ ունէր Հին կտակարանը, սակայն Աստուած յա-

տուկ պատուէր կուտար իւր ժողովուրդի մէջն ամանց երթալ եւ մեղաւորաց ըսել որ դարձի գային, ապա թէ՛ ոչ՛ պիտի կորուսէին:

Մեղաւորն անոր համար չուզեր լսել անհաւատ իր մեղքին վրայ, եւ չուզեր լսել քարոզ իր սրտին վիճակին վրայ, որպէս զի մնայ ազատ եւ հանգիստ մնայլիւր վիճակին մէջ:

Մեղաւորն երբ խրատը կը մերժէ եւ յանդիմանութիւնը կ'անարգէ, կը մնայ ինքնիրեն ազատ, անկախ եւ անպատասխանատու առ Աստուծոյ ծառայոյ: Անոր պատասխանատուութիւնը կը մնայ Աստուծոյ խօսքին առջեւ: Մեղքը թող չի տար անոր որ խօսքին այն մասը որոնէ եւ գտնէ որ համաձայն կուգայ զինքը յանդիմանողներուն խօսքին, այլ կ'ընտրէ այնպիսի տեղեր կարգալու որ իւր իսկ վիճակին վերաբերութիւն չունին երբէք:

«Ով որ մեղք կը գործէ, զԱստուած տեսած չէ» կ'ըսէ Սուրբ խօսքն: Անապաշխարը մեծ ձիգ կը թափէ այն խօսքն այնպէս հասկնալ եւ սարգարանել որ իրեն խրատատուաց խօսքերուն հակառակ գայ: Ամէն տեսակ մեկնութիւն կուտայ այն խօսքին, եւ վերջին մեկնութիւնը որ կը հանդարտեցնէ անապաշխարն, այս է թէ՛ Ով կայ աշխարհիս վրայ որ զԱստուած տեսած է. եթէ մէկը չկայ, ուրեմն ես միտակ չեմ որ զԱստուած տեսած չեմ, ես ոչ մարգարէ եմ եւ ոչ առաքեալ: Ով կայ որ այս երկիւրի անձին ըսէ, Դուք սխալ ես, դուք պիտի տեսնես զԱստուած եթէ Քրիստոսի ճշմարիտ աշակերտն ես, եթէ զԱստուած չտեսնես, դուք Քրիստոնեայ չես:

Անապաշխարն անոր համար անկախ եւ ազատ դիրքի մէջ ինքզինք դրած է որ մարդու խօսք չլսէ, մարդու չհետեւի, մարդէ բան չուսանի, մարդու չխոնարհի, մարդէ ներում չխնդրէ, եւ իւր վիճակին վրայ անյաղող խօսք մարդէ չլսէ:

Ինք, եթէ ուզէ, կարգայ Սուրբ գիրք, իսկ եթէ չուզէ, չկարգայ, շաբաթը մէկ անգամ ալ կարգայ, մարդ չհարցնէ իր մէն ատոր վրայով, եթէ բնաւ ալ չկարգայ մարդ չըսէ անոր, ինչո՞ւ չես կարգար: Թէ զանցառութեամբ եւ թէ սովորութեամբ եթէ դադարեցուցած է ազօրթը ընելը, մարդ իրաւունք չունի հարցնելու եւ ոչ ալ ստիպելու զնա որ անդադար աղթք ընէ:

Թէ եւ մեղաւորը չհասկնար եւ չգիտեր թէ՛ ինչ կ'ընէ, բայց Աստուծոյ խօսքին ճշմարտութիւնը կը հաստատէ թէ՛ անոնք որ զԱստուած չեն տեսներ, զանի տեսնողներուն պէս կեսնք չունին: Մեծ տարբերութիւն կայ զԱստուած տեսնողներուն եւ չտեսնողներուն մէջտեղ, զԱնի տեսնողները տեսնելն անմիջապէս ետքը կը զիմեն անոր եկեղեցին որ Գառնուկին աթոռը շրջապատած է, եւ անոնք հոն կը ցնձան եւ յայտ յանդիման կը տեսնեն զանոնք որ իրենց աշխատութեան միջոցաւ դարձի եկած են, ապաշխարած են եւ փրկութիւն գտած են ու կը վայելն Գառնուկին սէրը: Անոնք որ զԱյն տեսած են, դարձեալ միշտ կը տեսնեն եւ որչափ տեսնեն, այնչափ սուրբ, խոնարհ, սրբասէր, ուրախ, հնազանդ եւ կրից ու մաւրութեանց յաղթող կը լինին Անոնք որ զայն տեսած են, անոր պատկերը կենդանի կերպարանքով կը տեսնեն անոր եկեղեցւոյն վրայ նիստուած:

Ով որ տեսած է զԱստուած, կրնայ տեսնել Աստուծոյ ձեռքին բարձրանալը, անոր մեծափառութիւնը, բայց ով որ տեսած չէ զանի, պիտի տեսնէ անոր նախանձը անոր ժողովուրդին վրայ ու ամբնայ (Եսայի Ի. 2. 41):

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Նոյ. 16 ըստ Յուն. և Նոյ. 23 ըստ Լատ., 1882

ԲԱՐԵՎԱՐԳՈՒԹԵԱՆՑ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

Իտալերն էքսորէս, նոյ. 22 թուոյն մէջ, բարեկարգութեան յանձնաժողովոյ վրայ ունի յօդուած մը, որմէ կը քաղենք հետեւեալը :

Այն յանձնաժողովը որոյ պաշտօնն է հասարակաց շինութեան մատակարարութեան բարեօրոշման մատուցած է կառավարութեան, վարչութեան այս ճիւղին վրայ, տեղեկագիր մը, ուր կը ցուցնէ թէ ազգային երկաւորութիւնը (Էրադարէ) մեակութիւն, արուեստը, առեւտուր, կը դիմէ յանկուստ, և քննարկուող որ ասիկէ կրնայ յառաջ գալ երկրին հարստութեան, ուստի եւ կը խրատէ արծարծել երկաւորութիւնը, որպէս զի զօրանայ եւ անի երկրին հարստութիւնը : Տեղեկագիրը կը պնդէ մանաւանդ ջանալ ի լոյս հանել երկրին հարստութեան ծածուկ աղբիւրները, ձեռնարկութեանց զերուրթիւնները չնորհելով ի նպատակ ընդհանուր բարգաւաճման երկրին : Այսպէս տէրութեան եկամուտը կ'աւելնայ, և գաւառը կը ստանան յարգ եւ կարեւորութիւն : Չեռնարկութեանց զերուրթիւնները չնորհելու արագացնելով միջոցն է թոյլ տալ, բնիկ եւ օտար, յարմարագոյն անձանց որ ձեռնարկութեանց հետամուտ են : Տեղեկագիրը կը ցուցնէ նաեւ մար թէ, Եթէ օտար զբոսադուր յաճախէ այս երկիրը, մեծ օգուտ պիտի քաղէ անկէ կառավարութիւնը ժամանակաւ, իսկ ժողովուրդն՝ անմիջապէս, վասն զի հազարաւոր անգործ մարդիկ պիտի գտնեն գործ :

Յանձնաժողովը կրնար ցուցնել միայն այս պարզ եւ յայտնի ճշմարտութիւնները որ կարեւորագոյն են զարդիւն, և կը ցուցնէ իսկ ըստ արժանաւորն : Պատշաճ եւ հարկաւոր իսկ է վեհ. Սուլթանին զխառնալ իւր հպատակաց բուն վիճակը : Վեց տարի է որ այս երկրին ժողովուրդը կը կրէ ձախողութիւն, և կ'աղքատանայ գամ քան զգամ, և է անդրբարեւի ի հաւատարմութեան : Ոչ արդար եւ ոչ օգտակար է սակայն չուզել տեսնել ժողովուրդեան ջերմ փափակը ելլելու ի յաջողութիւն, որ դիտէ թէ կախեալ է վեհ. Սուլթանին կամքէն, ուստի եւ կը սպասէ անձկութեամբ թէ երբ պիտի ելլէ վեհ. Սուլթանին բերնէն իւր հպատակներն աղքատութեան դառն կեանքէն արձակող պատգամը : Ժողովուրդեան իրաւացի փափաքանց անսպառ կարի յաղաղել ի մաստաւութիւն չէ որեւիցէ կառավարութեան ժիր բոց չարակամ ոգիներ պատրաստ են միշտ օգուտ քաղել տգիտութիւնէ : Չենք ըսել թէ կայ տգիտութիւն : Երկրին ժողովուրդը բարեմիտ է եւ բարեմոյն : Կան սակայն պարագաներ զորս չարամիտք կրնան առիթ ընել տրտման, և իսկանութիւնը կը պահանջէ շտալ տեղի վարժութեանը այսպիսի զգացումներ : Տեղեկագիրն անաչառ եւ անկեղծ սքիլին յայտնի է մեծ մասնակցութիւնը զոր ունի յանձնաժողովը թէ պաշտօնէն խորհուրդը հաճութիւն պիտի տայ ժողովին առաջարկութիւններուն, ուստի գործին լրուով կը մնայ վեհ. Սուլթանին, որ իւր բարձր իմաստութեամբ եւ զթով չկրնար մնալ անզայ պառակտանք իւր հաւատարմութեան ժողովրդեան որ, կայտնարկան դասին իւր վրայ ցողացեալ զիւցազնական ոգուով, յետ տանելոյ այսչափ երկար պէսպէս ձախողութեանց համբերութեամբ եւ հրութեամբ, կը տեսնէ վերջապէս յուսոյ ազատ ճառագայտի մը, յուսոյ զոր վեհ. Սուլթանին հզոր ձեռքը կրնայ ի միում վայրկեանի փոխել յարգիւնս :

ԵԳԻՊՏՈՍԻ ՄԵՋ ԱՆԳՂԱԿՈՑ ԱՇԽԱՐՀԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Անգլիոյ ազգային ժողովոյ անդամներէն մին Եգիպտոսի մէջ Անգլիոյ աշխարհավարութեան վրայ տեղեկութիւն խնդրած ըլլալով կառավարութեան, Սր Կլաւտոսըն հետեւեալ տեղեկութիւնը տուած է :

Կառավարութիւնը կը խորհի թէ եկած է ժամանակը համառօտեւ ծանուցանելու ազգային ժողովոյ ինչ որ կրնայ : Անգլիական զօրքը Գահիրէ մտան սեպ. 14ին, եւ այն ատենէն իվեր Անգլիոյ կառավարութիւնը շարունակ զբաղեցաւ եգիպտոսէն ետ բերել զօրքն եւ բազմաթիւրքը, և հոն թողուլ միայն Անգլիոյ զօրքն : Եգիպտոսի Անգլիոյ զօրքն 55,000 եւ հիմա այն թիւն նուազեցուած է 12,000 ի : Այսպէս հասանք նոր վիճակ մը, որ առժամանակեայ է, քանզի միայն չունինք այնչափ զօրք երկար ատեն պահել եգիպտոսի մէջ : Այս վիճակն հասնելէն ետքն երկրորդ քայլը, զոր պարտի առնել Անգլիոյ կառավարութիւնն, է կ'ընքել պայմանագրութիւն մը եգիպտոսի կառավարութեան հետ, և այս պայմանագրութեան մէջ մանրամասնօրէն պիտի յիշուին այլեւս : Այս կէտերը վերաբերութիւն ունին այն առժամանակեայ կարգադրութեանց հետ որ պիտի ըլլան Եգիպտոսի մէջ կարգի եւ կանոնի եւ անգործութեան պահպանութեան համար : Պայմանագրին կարեւոր մասերէն մին պիտի ըլլայ եգիպտոսի մնացող 12,000 զօրք ծախուց խնդիրը : Մինչեւ ցարդ չըսինք ինչ եգիպտոսի զրուած զօրք ծախուց համար : Բայց որովհետեւ այս պիտուորական արշաւանաց վարձանք ձեռք բերուեցաւ, և հիմա նպատակն է խաղաղութիւնը եւ անգործութիւնը պահպանել յեգիպտոս, ցորչալի կը պակսի այն երկրին մէջ կանոնաւոր բանակ զոր միւսանգամ կազմելու համար քիչ մը ժամանակ պէտք է, յայտնի է թէ եգիպտոս մնացող զօրք ծախուց խնդիրը եգիպտոսիան եւ Անգլիական կառավարութեանց մէջ տեղ որոշուելու է : Նաեւ կրնան ըլլալ որիչ մանրամասնութիւններ սա կէտին նկատմամբ թէ Անգլիական զօրքն որչափ ատեն մնալու են յեգիպտոս : Այս մասին նախընթաց օրինակ մ'ունինք մեր առջեւ : Պէտք է յիշել թէ Վազէրլլի պատերազմէն ետքը Գաղիոյ արշաւանքը սկսեալն նման էր Անգլիական արշաւանայ յեգիպտոս, քանզի դաշնակից տէրութիւնը Գաղիա արշաւած էին նուաճելու համար պատուաբար իրենցութիւն մը որ կը տրեւր Գաղիոյ փոխանակ այն կառավարութեան զոր դաշնակից տէրութիւնը կը ձանձնային օրինակ իշխանութիւն երկրին : Այն ատեն դաշնագրութիւն մը կ'ընքուեցաւ դաշնակից տէրութեանց եւ Գաղիոյ մէջտեղ, և ըստ այնմ դաշնագրութեան որոշուեցաւ որ դաշնակից տէրութիւնը որչափ թուով զօրք պահէ Գաղիոյ այս ինչ եւ այն ինչ կողմերը, նաեւ եղան կարգադրութիւններ այս զօրք ծախուց համար զորս պիտի հատուցանէր Գաղիա : Այն կարգադրութեանց սկզբները պարտաւորուած էին զիստակ դաշնագրութեան մէջ, և յետոյ ինչ որ կը վերաբերէր Անգլիոյ, և այն մասին եւս պայմանագրութիւն մը կ'ընքուեցաւ : Այն պայմանագրութեան կարգադրութիւնները կրնանք օրինակ առնուլ մեզ, թէպէտ այժմուս մեր խնդրոյն շատ կէտերն ըստ ամենայնի նման չեն յայնժաման : Կը յուսամ թէ քանի մը շարժում մէջ կրնանք կատարել մեր պայմանագրութիւնը, և խորհրդարանին առաջիկայ նստին մէջ տալ որիչ տեղեկութիւններ, այնպէս որ խորհրդարանը կարող ըլլալ ճշիւ դատել կարգադրութիւնները որ պիտի ըլլան : Առ այժմ չենք կրնար եգիպտոս զրկուած զօրք ծախուց ճիշդ հաշիւ տալ, բայց այս բոլորովին տարբեր խնդիր է : Կը յուսամ սակայն ի մտոյն ասոր վրայ եւս պատշաճ տեղեկութիւնը տալ խորհրդարանին :

ԵԳԻՊՏՈՍ

Արապի զատաստանին վերաբերեալ նախնական պատրաստութիւնք յամր յամր յառաջ կերթան : Եգիպտոսի խառնարարաց զրուաններէն Սիւլթանին Տաուտ եւ Մուսա էլ Աբաու Նոյ. 14 ին Գահիրէ տարուեցան : Հարցազնութեան յանձնաժողովը հարցումներ ըրած է Սիւլթանին Տաուտի, և անոր պատասխանները կը հաստատեն միւս բանտարկիւց վիայութիւնները սա մասին թէ Արապի մարտիկութեանէն ետքն Աղէքսանդրիոյ հրկիզութեան եւ աւարաւորութեան մեղսակից էր :

Արապի Լընտըն թայմը լրագրին մէջ նամակ մը հրատարակած է, և Եւրոպայի համակրութիւնը կը խնդրէ պնդելով թէ ինչ որ ըրու, ժողովուրդեան կամօք ըրա :

Սուտանի մասին իրարու հակասական լուրեր կ'առնուին : Սա ստույգ է թէ Սուտան չիթի վիճակի մէջ է, և Եգիպտական կառավարութիւնը մեծ դժուարութիւն կը կրէ այն կողմն անգործութիւն հաստատելու համար հարկաւոր միջոցները կարգադրելու մասին :

Լորտ Տըֆէրլին ուղարկութեամբ կը քննէ իրաց վիճակն եւ վերակազմութեան ծրագիրները, ազատօրէն կը խորհրդակցի եգիպտական պաշտօնակալաց հետ, եգիպտոսի ստիկանութեան մէջ Ալպանիացիները ընդունուելուն դէմ առարկութիւն ըրած է, և առաջին պաշտօնակալն այցելութիւնէն իվեր միւսանգամ տեսած չէ իրաւը :

Թուրք լրագրիք կ'ըսեն թէ յարմար է կայտնարկան քննիչ մը զրկել յեգիպտոս Լորտ Տըֆէրլին օգնելու համար, բայց Անգլիական կառավարութիւնը դեռ հաւանած չէ եգիպտոս Օսմանեան պաշտօնակալ մը զրկելու առաջարկութեան :

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կ. պոլսոյ Աւստրիական դեսպանն անցեալ երեքշաբթի օր վեհ. Սուլթանին ներկայանալով հրամայելով ուղղելու տալէ ետքը Վառնայի շրջանում մայրաքաղաքէն մեկնեցաւ : Իտալերն էքսորէս լրագրիք կ'ըսէ թէ Աւստրիոյ դեսպանին մայրաքաղաքէն մեկնելը վերաբերութիւն ունի մանաւանդ Ռուսիայի երկաւորացի զինուորի եւ Եւրոպական երկաւորացի զինուորին հետ միացնելու խնդրոյն հետ : Ի բացակայութեան դեսպանին դեսպանատան խորհրդակցանքը գործակատարի պաշտօն պիտի վարէ :

Յունտէն լրագրիք կը ծանուցանեն թէ Մ. Չաֆիրբուրլու եւ Մ. Լիսիտա Արձնիդի 65,000 Քրանք նուիրած են Յունաց Ուսումնասիրած ընկերութեան : Այս գրամին շահով Մակեդոնիոյ երկու Յունտէն վարժարանաց ծախքերը պիտի հայթայթուին :

Բ. դուռը Պուլխարիոյ գործակատարին ծանուցադրի մը զրկելով պահանջած է որ Պուլխարիոյ մէջ կառուած ունեցող Մահմեդական իրենց կառուածներն անձամբ կամ փոխանորդի միջոցաւ մատակարարելու մասին որոշուած պայմանաժամը երկարի, վասն զի սակէ առաջ Բ. դրան եւ Պուլխարիոյ իշխանութեան մէջ տեղ յարաբերութեան մասին վէճ ծագած ըլլալուն համար Պուլխարիոյ մէջ կառուած ունեցող շատ Մահմեդականներ պատեհութիւն ունեցած չին փոխանորդ կարգելու :

Խորհրդէն նոյ. 6 թուականաւ Իտալերն էքսորէս լրագրին գրուած նամակ մը կ'ըսէ թէ այն կողմերն առեւտուրն պէս դադարած եւ ժողովուրդն այնպիսի սղջտու եղած չէր, որպէս է հիմա : Դրամ շատ քիչ կայ, և հետզհետէ կը պակսի : Ընդարձակ տեղեր անբնակ եւ անմշակ մնացած են : Տիւրքիքի եւ Մարաշիի դաշտերն եւ Միջագետաց այն մասերն, զորս կը ձանձնայ նամակագիրը, շատ բերրի են, բայց ամբողջ հողին մէջ քանակաւ մնալ միայն մէկ անգամն կը մշակուի : Այն տեղերն ուր հին ատենները բազմաթիւ եւ յաջող բնակիչներ կային, հիմա կան Գուրգեր միայն : Եւ մահագիրն երկրին այն մասին բարգաւաճման համար երեք բան հարկաւոր կը համարի, այնինքն նախ, պնդակազմ կառավարութիւն մը որ մարդոց կեանքն եւ ինչքը պաշտպանէ եւ աշխատութիւնը քաշակերէ, Գուրգ եւ Արապ առաջակները զսպէ, երկրորդ, աշխատասէր ժողովուրդ, եւ երրորդ, փոխադրութեան միջոց :

ԱՅԼԵՒՈՅԻՔ

Կ'ըսուի թէ Էյուսպի կողմերն արջառոց մէջ ծաղիկ հիւանդութիւն երեւան եղած է : Կ. պոլսոյ նուազանգամային վերատեսուց Տիւրքիքի փաշա հինգ սնտուկի գէնք գրուած է որ Անիլիսէն Կ. պոլսո բերուած էին : Մտերս Տարուածային 120 Մահմեդական ընտանիք եւս թուրքիա գաղթած են : Լոնտոնէն զարնուած հեռագիր մը կը ծանուցանէ թէ մտերս Լոնտոնի մէջ դեսպանաժողով մը պիտի գումարի Գաղիոյ նուարիութեան խնդիրը կարգադրելու համար : Կ'ըսուի թէ Տըսպլինի ստիկանութիւնը կարեւոր տեղեկութիւններ ձեռք բերած է Լորտ Գալիլիանի եւ Մր. Պուրբի սպանութեան վրայ :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ
Սերուիոյ կառավարութիւնը 6,000,000

Քրանքի փոխառութիւն մը կ'ընթած է Սերուիոյ թողուած տեղերու մէջ գտնուուած Մահմեդականաց կառուածներուն գինը հատուցանելու համար :

Րուսիոյ արտաքին գործոց պաշտօնեայն, Մ. Կիլերս, մտերս Պէրլին եւ Հոմ ալցելցն : Այս այցելութիւնը շատ մը զրոյցներու պատճառ եղած է : Կը զրուցուի թէ Մ. Կիլերսի ճամբորդութեան նպատակն է համարել Եւրոպական տէրութիւնները միջամտել եգիպտոսի գործոց : Ինչ որ այ ըլլալ ուղեւորութեան նպատակը, Մ. Կիլերս Պէրլինի մէջ խոսակցած է Պիլմարք իշխանին հետ, և անկէ գացած է Հոմ, իսկ Հոմին պիտի երթայ ի Վիէնա : Այս ուղեւորութիւնն եգիպտական եւ Օսմանեան արժեթիւթոց գիններուն վրայ գէշ ազդեցութիւն ունեցած է : Սակայն Րուս լրագրիք կ'ըսեն թէ Մ. Կիլերս իւր ընտանիքն մէկու մը հետ տեսնուելու համար Իտալիա գացած է :

Րուսիոյ դատարանները զբաղեալ են Հիմա այն պաշտօնակալաց դատերով, որոնք վերջին Րուսո-թուրքական պատերազմի ատեն բանակին սէտքերը հայթայթելու գործին մէջ մեծ խորհրդակցութիւններ ըրած էին :

Անգլիոյ թագուհին Եգիպտոսէ դարձող 10,000 զօրաց հանգէս ըրաւ նոյ. 18ին Եգիպտոսէ դարձող զօրքը շատ մեծ ուրախութեամբ ընդունուած են Անգլիական ժողովուրդէն, և միայն և ուրիշ վարձատրութիւն ընդունած են Անգլիական կառավարութեանէն :

Գաղիոյ կառավարութիւնը Գունուսի նոր պէյը հրաւիրած է Բարիզ այցելութեան երթալ : Պէյն ընդունած է այս հրաւերը :

Մ. Պրազա անուն Ափրիկի ուղեւոր մը մտերս Գաղիոյ կառավարութեան մատուց թուղթ մը որոյ համար կ'ըսուի թէ ստորագրուած է Գունուսի գետին եղբրքը բնակող այլեւսյլ ցեղերու գլուխներն, որոնք յիշեալ թուղթով Գաղիոյ կը թողուն Գունուսի հովանի մէկ մեծ մտառ : Գաղիոյ ազգային ժողովը արտօնութիւն տուած է կառավարութեան ընդունել յիշեալ տեղը : Այս ամէնն աղէկ է, բայց Ափրիկի ուրիշ նշանաւոր ուղեւոր մը, Մր. Սէլիլի, կ'ըսէ թէ այն ցեղապետներ որ ստորագրած են Մր. Պրազայէ Գաղիոյ կառավարութեան մատուցած թուղթը, տեղեկութիւն չունին թուղթին պարտաւորութեան վրայ : Եթէ այսպէս է, Գաղիոյ կառավարութիւնը թերեւս դժուարութիւններ պիտի կրէ իւր գաղթականութեանց վրայ յիշեալ նոր տեղն աւելցնելու մասին :

ՎԵՐՁԻՆ ԼՈՒՐԵՐ

Բ. դուռն անցեալ ուրբաթ օր երկրորդ շրջարեական թուղթ մ'աւ զրկեց Օսմանեան դեսպանաց Գարատաղի խնդրոյն նկատմամբ :

Չրոյց կայ թէ արտաքին գործոց պաշտօնեայ Սախ փաշա պաշտօնակի եղած է, և անոր յաջորդած է Ասիմ փաշա :

Գահիրէն Տէյլի Նիւզ լրագրին զարնուած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Իտալիոյ էյուսպ նկատելով Արապի դատաստանին ծագելու անտեղութիւնն եւ վտանգները, իրատ տուած է իրախի բողոքով թողուլ դատաստանը : Սակայն եգիպտոսի պաշտօնէն ժողովը համամիտ չէ այս մասին, և դեռ որոշում մը տրուած չէ : Պատերազմական ատենը իւր գործերը զարկեցուցած է մինչեւ որ Անգլիական կառավարութիւնն իւր կարծիքն յայտնէ ամբաստանագրին վրայ :

Սուտանէն զարնուած հեռագիր մը կը ծանուցանէ թէ սուտ մարգարէն բողոքով յայտնուած է :

ՏՍԱԿԻ ԳԻՆԵՐԸ

Table with 2 columns: Item name and Value. Includes items like Գրքեր, Մէքիսիլ, Թղթաղբ, Մէքիսիլ, Պէրլին, Ալթըլը.

Անիլիկայի փոխտնարաց ընկերութեան կողմէն իրաւագիր ձ. Բ. կրին

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԱՆ
Ձագմագըրար, Յակոբեան իսան, Թիւ 42.